ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. հունիսի 5-ին ժամը 16:15-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Հովիկ Աբրահամյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի նախագահ
Տոնական Ղազարյանը	«Շենիկ» Ջրօգտագործողների ընկերությունների միության նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ-ի նախագահ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Բացակայում էր.

Կարեն Նազարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի նախագահ

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ռուզաննա Ղազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Էդիթ Պետրոսյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի օգնական
Սիմոն Ղոնախչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. "Ոռոգման 6 մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում" խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման համակցված արդյունքների քննարկում և հաստատում:
2. "Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում" խորհրդատվական ծառայության ձեռքբերման նախաորակավորման մրցույթի արդյունքների քննարկում և հաստատում:
3. Ջրից դեպի Շուկա բաղադրիչի ազդեցության գնահատման համար տվյալների աղբյուր հանդիսացող հետազոտության իրականացման նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար նախաորակավորված կազմակերպության և առաջարկի ներկայացման փաթեթի հաստատում:
4. «ՀՄՀ–Հայաստան» ծրագրի նոր ֆինանսական գործակալի ընտրության նպատակով հայտարարվելիք մրցույթին մասնակցելու առաջարկի հայտի նախագծի քննարկում և հաստատում:
5. Այլ հարցեր.
   - տեղեկատվություն՝ ս.թ. հունիսի 11-ին ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն՝ դեսպան Ջոն Դանիլովիչի Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի մասին:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել "Ոռոգման 6 մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում" խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման համակցված արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել "Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում" խորհրդատվական ծառայության ձեռքբերման նախաորակավորման մրցույթի արդյունքները:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Ջրից դեպի Շուկա բաղադրիչի ազդեցության գնահատման համար տվյալների աղբյուր հանդիսացող հետազոտության իրականացման նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար նախարակավորված կազմակերպության և առաջարկի ներկայացման փաթեթը:

Առաջարկություն եղավ և որոշվեց վերոհիշյալ խորհրդատվական ծառայությունների գնահատող հանձնաժողովի հետագա աշխատանքին ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարության մեկ ներկայացուցիչ:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «ՀՄՀ–Հայաստան» ծրագրի նոր ֆինանսական գործակալի ընտրության նպատակով հայտարարվելիք մրցույթին մասնակցելու առաջարկի հայտի նախագիծը:

Առաջարկություն եղավ և որոշվեց ֆինանսական գործակալի ընտրության գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկել ՀՀ Կառավարության աշխատակազմի մեկ ներկայացուցիչ:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ ընդունել ի գիտություն «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը՝ ս.թ. հունիսի 11-ին ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն դեսպան Ջոն Դանիլովիչի Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի և այդ ընթացքում կայանալիք ՀՄՀ-Հայաստան ծրագրի գրասենյակի հանդիսավոր բացմանը Կառավարման խորհրդի բոլոր անդամների մասնակցության մասին:

Նիստի ավարտին ընդունվեց ի գիտություն ՀՀ վարչապետի հաղորդումը այն մասին, որ նիստին նախորդող ԵԱՀԿ գործող նախագահի հետ հանդիպման ժամանակ վերջինս գնահատել է Հայաստանում ս.թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները որպես գերազանց:

Օրակարգի հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Ռ. Ղազարյանը